ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/83 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **08 հունվարի 2026թ.**

2025թ. դեկտեմբերի 08-ից 2026թ. հունվարի 08-ը ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ յուղերի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/83 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ն. Սուքիասյան՝ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ,
Վ. Սանթուրյան՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ,
Ն. Բաղդասարյան՝ «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ՝ նյութական գծով:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 08-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 15:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | Շարժիչի յուղ 1 | 5250000 | 09.12.2025 15:30 | 7650000 |
| 2-րդ | Շարժիչի յուղ 2 | 11375000 | 09.12.2025 15:30 | 14950000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան՝ Ագաթանգեղոսի 7, բն.59, 091424494 | nefteprommm64@gmail.com | 02604031 |
| 2 | «ՊԱՐՏՍԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԿՈՄԻՏԱՍԻ Պ., Շ 2, Բն. 9, 033026366 | autopartsdistributionarm@gmail.com | 02319138 |
| 3 | «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ | ՀՀ կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115, 099966646 | hippocrates0109@gmail.com | 03584501 |
| 4 | «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ | ք. Երևան, Չարենցի 4/17, 010554129 | eth@netsys.am | 02550253 |
| 5 | «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ Սի» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 34, 043491516 | tender@autofan.am | 00862214 |
| 6 | «Հույս-Մոտոր» ՍՊԸ | Ք. Երևան, Ջավարյան 12, 077044254 | Tender@lavavto.am | 00430814 |
| 7 | «Եռյակ» ՍՊԸ | ք. Երևան, Գարեգին Նժդեհ 35/37, 041424205 | eriak@netsys.am | 01523512 |
| 8 | «Կայսոն Մոթոր | ՀՀ,Կատայքի մարզ, գ Առինջ, 5 փողոց,1 տուն, 093406497 | karenoilspy@mail. | 04720098 |

| | Օիլ» ՍՊԸ | | ru | |
|---|---|---|---|---|
| 9 | «ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մարզ,ք. Հրազդան, Կենտրոն 19/40, 091333711 | saturn90@mail.ru | 03012667 |

2025թ. դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1-ին | 1 | «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ | 7650000 | 6375000 | 20% | 7650000 | 4037000 | 20% | 4844400 | X |
| | 2 | «ՊԱՐՏՍԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ | 7650000 | 6300000 | 20% | 7560000 | 4095500 | 20% | 4914600 | |
| | 3 | «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ | 7650000 | 36000000 | 20% | 43200000 | 4900000 | 20% | 5880000 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4 | «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ | 7650000 | 5250000 | 20% | 6300000 | 5250000 | 20% | 6300000 | |
| | 5 | «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ | 7650000 | 6085000 | 20% | 7302000 | 6085000 | 20% | 7302000 | |
| | 6 | «Հույս-Մոտոր» ՍՊԸ | 7650000 | 6373211 | 20% | 7647853.2 | 6373211 | 20% | 7647853.2 | |
| | 7 | «Եռյակ» ՍՊԸ | 7650000 | 6375000 | 20% | 7650000 | 6375000 | 20% | 7650000 | |
| | 8 | Կայսոն Մոթոր Օիլ ՍՊԸ | 7650000 | 7650000 | 20% | 9180000 | 7650000 | 20% | 9180000 | **Մերժված** |
| 2-րդ | 1 | «ՊԱՐՏՍԴԻՍ ՏՐԻԲՅՈՒՇՆ ԱՄ» ՍՊԸ | 14950000 | 12400000 | 20% | 14880000 | 8536000 | 20% | 10243200 | X |
| | 2 | «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ | 14950000 | 12458330 | 20% | 14949996 | 8650000 | 20% | 10380000 | |
| | 3 | «Հույս-Մոտոր» ՍՊԸ | 14950000 | 12456111 | 20% | 14947333.2 | 10306000 | 20% | 12367200 | |
| | 4 | «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ | 14950000 | 36000000 | 20% | 43200000 | 10600000 | 20% | 12720000 | |
| | 5 | «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ | 14950000 | 11375000 | 20% | 13650000 | 11375000 | 20% | 13650000 | |
| | 6 | «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ | 14950000 | 12198333.34 | 20% | 14638000 | 12198333.34 | 20% | 14638000 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 7 | «ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ | 14950000 | 12447500 | 20% | 14937000 | 12447500 | 20% | 14937000 | |
| | 8 | «Եռյակ» ՍՊԸ | 14950000 | 12459000 | 20% | 14950800 | 12459000 | 20% | 14950800 | **Մերժված** |
| | 9 | «Կայսոն Մոթոր Օիլ» ՍՊԸ | 14950000 | 14950000 | 20% | 17940000 | 14950000 | 20% | 17940000 | **Մերժված** |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հայտերի գնահատման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել պարզելու ընտրված ճանաչված մասնակիցների՝ «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ-ի, «ՊԱՐՏՍԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընտրված ճանաչված մասնակիցներ) կողմից տրամադրված տեղեկատվության իսկությունը:

2025թ. դեկտեմբերի 29-ին գնահատող հանձնաժողովի կողմից Ընտրված ճանաչված մասնակիցների հայտերով ներկայացվող տվյալների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ անհրաժեշտ էր ներկայացնել համապատասխան փաստաթղթեր (սերտիֆիկատ կամ տվյալ ընկերությունից պաշտոնական նամակ), ինչպես նաև տվյալ ընկերության՝ Ընտրված ճանաչված մասնակիցների կողմից ներկայացրած յուղերի տեխնիկական բնութագրերի հղումները, որտեղ պարզ է դառնում, որ Ընտրված ճանաչված մասնակիցների կողմից ներկայացվելիք ապրանքները համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը, նիստը կասեցնել և ծանուցել Ընտրված ճանաչված մասնակիցներին՝ առաջարկելով մինչև 2026թ. հունվարի 05-ը ներառյալ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով հանձնաժողովին ներկայացնել վերոնշյալ կետերը հիմնավորող փաստաթղթերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունվարի 07-ը Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընտրված ճանաչված մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են անհրաժեշտ տեղեկատվությունը հավաստող փաստաթղթեր:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունվարի 08-ը Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ | բավարար |
| 2-րդ | «ՊԱՐՏՍԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆԱՄ» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. հունվարի 08-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին ճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

2026թ. հունվարի 08-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի իրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան ____________

Ն. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան ____________